ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ԹԱԼԻՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ

REPUBLIC OF ARMENIA
ARAGATSOTN MARZ

MUNICIPALITY OF TALIN

0501 ք. Թալին, Գայի -1
Հեռ. (0249) 2-25-46, 2-24-19
Ֆաքս (0249) 2-31-38
Էլ. հասցե: taliniqaxaqapetaran@mail.ru

0501 t. Talin
Tel: (0249) 2-25-46, 2-24-19
Fax: (0249) 2-31-38
Email: taliniqaxaqapetaran@mail.ru

№ 056/12

«13» 01 2016 թ.

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ս. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ է ուղարկվում Թալին համայնքի ավագանու 25.12.2015թ. որոշումները :

Առդիր՝ 35 /երեսունհինգ /թերթ:

ԹԱԼԻՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

**25 դեկտեմբերի 2015 թվական N 36-Ա**

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով , **համայնքի ավագանին որոշում է՝**

Հաստատել Թալին համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 25-ի թիվ-7 հերթական նիստի օրակարգը հետևյալ տեսքով `

1.Թալինի քաղաքապետի վարձատրության չափը հաստատելու մասին

2.Թալինի քաղաքապետարան ի աշխատակազմի և ՀՈԱԿ- ների աշխատակիցների թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին :

3.Թալին քաղաքի վարչական տարածքում 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին :

4.Թալին համայնքի սեփականություն հանդիսացող շինությունների վարձակալության վճարի չափ սահմանելու մասին :

5.Թալինի Կոմունալ ծառայություն ՀՈԱԿ-ի կողմից քաղաքի աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանելու մասին :

6.2016 թվականին Թալինի ՀՈԱԿ –ների կողմից մատուցվող ծառայությունների համար վճարներ սահմանելու մասին :

7.Թալինի քաղաքապետարանի և ՀՈԱԿ-ների տարեվերջյան գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին :

8.Թալին քաղաքի 2015թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին :

9.Թալին քաղաքի 2016թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին :

10.Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին :

11.Թալին համայնքի սեփականություն հանդիսացող , բնակավայրի նպատակային նշանակության հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին :

12.Թալին համայնքի սեփականություն հանդիսացող , հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու մասին :

13.Թալին համայնքի սեփականություն հանդիսացող , ք. Թալին խանջյան 9 հասցեում գտնվող վարչական շենքից  վարձակալությամբ տարածք տրամադրելու մասին :

14. <<Թալինի քաղաքապետարանի աճուրդային և մրցույթային հանձնաժողովի կազմը հաստատելու մասին >>Թալին համայնքի ավագանու 22.04.2014թվականի թիվ 15-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին :

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Դիլանյան Հայկ

3.Կարապետյան  Արթուր

4.Միքայելյան Ռուստամ

5.Գրիգորյան Սերյոժա

6.Մկրտչյան Սերգե

7.Գևորգյան Թամարա

8.Սարգսյան Տիգրան

9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին

25 դեկտեմբերի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**25 դեկտեմբերի 2015 թվական N 37-Ա**

## ԹԱԼԻՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի և 27-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով , **Թալին համայնքի ավագանին որոշում է՝**

1.Թալինի քաղաքապետի աշխատավարձը 2016թվականի համար սահմանել ամսական 200 000 /երկու հարյուր հազար / դրամ :

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2016թվականի հունվարի 1-ից :

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Դիլանյան Հայկ

3.Կարապետյան Արթուր

4.Միքայելյան Ռուստոմ

5.Գրիգորյան Սերյոժա

6.Մկրտչյան Սերգե

7.Գևորգյան Թամարա

8.Սարգսյան Տիգրան

9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին

25 դեկտեմբերի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N 38-Ա**

ԹԱԼԻՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի 32-րդ հոդվածի 5-րդ կետի և 31-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներով, **համայնքի ավագանին որոշում է՝**

1.Հաստատել 2016թվականի Թալինի քաղաքապետարանի աշխատակազմի և ՀՈԱԿ-ների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, համաձայն 1-9 հավելվածների :

2.Թալինի քաղաքապետարանի աշխատակազմում և ՀՈԱԿ-ներում նվազագույն աշխատավարձը 1974թ.-ից հետո ծնվածների համար սահմանել 77904 դրամ, իսկ 1974թ.-ից առաջ ծնվածների համար սահմանել 72752 դրամ :

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից :

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Դիլանյան Հայկ

3.Կարապետյան Արթուր

4.Միքայելյան Ռուստոմ

5.Գրիգորյան Սերյոժա

6.Մկրտչյան Սերգե

7.Գևորգյան Թամարա

8.Սարգսյան Տիգրան

9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին

25 դեկտեմբերի 2015թ.

Հավելված N-1
Թալին համայնքի ավագանու
2015թ դեկտեմբերի 25-ի թիվ 38-Ա որոշման

Թալինի Քաղաքապետարանի Աշխատակազմի Աշխատակիցների Թվաքանակը , Հաստիքացուցակը ԵՎ Պաշտոնային Դրույքաչափերը

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ 22

| ՀՀ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄՈՎ/ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 1 | 200 000 | 200 000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 1 | 150 000 | 150 000 |
| 3 | Քաղաքապետի օգնական | 1 | 1 | 130000 | 130000 |
| 4 | Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 1 | 150 000 | 150 000 |
| | ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺԻՆ | | | | |
| 5 | Բաժնի պետ 2,1-3 | 1 | 1 | 122 000 | 122 000 |
| | ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | | | | |
| 6 | Գլխ.մասնագետ-հաշվապահ 2.3-1 | 1 | 1 | 120 000 | 120 000 |
| 7 | Գլխ.մասնագետ-իրավաբան 2.3-2 | 1 | 1 | 120 000 | 120 000 |
| 8 | Առաջատար մասնագետ-3.1-5, 3.1-6, 3.1-7 | 3 | 3 | 90000 | 270 000 |
| 9 | Առաջին կարգի մասնագետ-3.2-5, 3.2-7, 3.2-8, 3.2-9 | 4 | 4 | 80 000 | 320 000 |
| | ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ | | | | |
| 10 | ՔԿԱԳ բաժնի պետ 1.3-1 | 1 | 1 | 256625 | 256625 |
| 11 | Առաջին կարգի մասնագետ-3.2-6 | 1 | 1 | 133605 | 133605 |
| | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | | |
| 12 | Գործավար | 1 | 1 | 95000 | 95000 |
| 13 | Օպերատոր | 0,5 | 1 | 358952 | 35952 |
| 14 | Հնոցապան-/սեզոնային 6 ամսով / | 0,91 | 1 | 70892 | 70892 |
| 15 | Պահակ-տնտեսվար | 1 | 1 | 75000 | 75 000 |
| 16 | Հավաքարար | 1 | 1 | 75000 | 75000 |
| 17 | Վարորդ | 1 | 1 | 78000 | 78 000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 21,41 | 22 | X | 2307074 |

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Դիլանյան Հայկ

3.Կարապետյան Արթուր

4.Միքայելյան Ռուստամ

5.Գրիգորյան Սերյոժա

6.Մկրտչյան Սերգե

7.Գևորգյան Թամարա

8.Սարգսյան Տիգրան

9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին

25 դեկտեմբերի 2015թ.

Հավելված N-2

Թալին համայնքի ավագանու

2015թ. դեկտեմբերի 25-ի թիվ 38-Ա որոշման

# ԹԱԼԻՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՀՈԱԿ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը 19

| N | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Հաստիքների քանակը | Պաշտոնային դրույքաչափերը /ՀՀ դրամով/ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 100000 | 100000 |
| 2 | Հսկիչ | 0,91 | 1 | 66204 | 66204 |
| 3 | Հաշվապահ | 0,96 | 1 | 69842 | 69842 |
| 4 | Էլեկտրիկ | 0,91 | 1 | 70892 | 70892 |
| 5 | Վարորդ | 0,96 | 1 | 74788 | 74788 |
| 6 | Բանվոր | 0,91 | 1 | 70892 | 70892 |
| 7 | Հավաքարար | 0,91 | 1 | 66204 | 66204 |
| 8 | Պահակ ցերեկային | 0,91 | 1 | 66204 | 66204 |
| 9 | Վարորդ | 1 | 1 | 80000 | 80000 |
| 10 | Այգեպան | 0,91 | 1 | 70892 | 70892 |
| 11 | Բանվոր | 0,96 | 1 | 74788 | 74788 |
| 12 | Պահակ ցերեկային | 0,91 | 1 | 70892 | 70892 |
| 13 | Բանվոր | 0,91 | 1 | 70892 | 70892 |
| 14 | Հավաքարար | 1,82 | 2 | 70892 | 141784 |
| 15 | Վարորդ | 0,91 | 1 | 70892 | 70892 |
| 16 | Հսկիչ | 0,91 | 1 | 70892 | 70892 |
| 17 | Բանվոր/այլ ընտրանքային ծառ./ | 2 | 2 | 30000 /դրամային բավարարում/ | 60000 |
| | Ընդամենը | 17,8 | 19 | x | 1296058 |

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Դիլանյան Հայկ

3.Կարապետյան Արթուր

4.Միքայելյան Ռոստոմ

5.Գրիգորյան Սերյոժա

6.Մկրտչյան Սերգեյ

7.Գևորգյան Թամարա

8.Սարգսյան Տիգրան

9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին
25 դեկտեմբերի 2015թ.

Հավելված N-3
Թալին համայնքի ավագանու
2015թ. դեկտեմբերի 25-ի թիվ 38-Ա որոշման

ԹԱԼԻՆԻ ԹԻՎ-2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ.

Աշխատակիցների թվաքանակը 26

| N | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Հաստիքների քանակը | Պաշտոնային դրույքաչափերը /ՀՀ դրամով/ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 75000 | 75 000 |
| 2 | Հաշվապահ | 0,91 | 1 | 70892 | 70892 |
| 3 | Դաստիարակ | 0,92 | 2 | 33466 | 66932 |
| 4 | Դաստիարակի օգնական | 1,82 | 2 | 66204 | 132408 |
| 5 | Երաժիշտ | 0,91 | 1 | 66204 | 66204 |
| 6 | Բուժքույր | 0,91 | 1 | 66204 | 66204 |
| 7 | Ռուսաց լեզվի մասնագետ | 0,91 | 1 | 66204 | 66204 |
| 8 | Տնտեսվար | 0,91 | 1 | 70892 | 70892 |
| 9 | Խոհարար | 0,91 | 1 | 70892 | 70892 |
| 10 | Հնոցապան | 0,46 | 1 | 33466 | 33466 |
| 11 | Պարետ -այգեպան | 0,46 | 1 | 33466 | 33466 |
| 12 | Մանկական կենտրոնի մեթոդիստներ /լոգոպեդ,հոգեբան,սոցիալական աշխատող / | 1,38<br>0,46 | 3<br>1 | 35835<br>33466 | 107505<br>33466 |
| 13 | Հավաքարար | 0,46 | 1 | 35835 | 35835 |
| 14 | Դաստիարակ | 2,76 | 6 | 35835 | 215010 |
| 15 | Դաստիարակի օգնական | 1,82 | 2 | 70892 | 141784 |
| | Ընդամենը | 17 | 26 | x | 1286160 |

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1. Արամյան Արամ
2. Դիլանյան Հայկ
3. Կարապետյան Արթուր
4. Միքայելյան Ռուստոմ
5. Գրիգորյան Սերյոժա
6. Մկրտչյան Սերգե
7. Գևորգյան Թամարա
8. Սարգսյան Տիգրան
9. Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին

25 դեկտեմբերի 2015թ.

Հավելված N-4
Թալին համայնքի ավագանու
2015թ. դեկտեմբերի 25-ի թիվ 38-Ա որոշման

ԹԱԼԻՆԻ ԹԻՎ-3 ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ.

Աշխատակիցների թվաքանակը -16

| N | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Հաստիքների քանակը | Պաշտոնային դրույքաչափերը /ՀՀ դրամով/ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 75000 | 75000 |
| 2 | Հաշվապահ | 0,91 | 1 | 70892 | 70892 |
| 3 | Տնտեսվար | 0,91 | 1 | 66204 | 66204 |
| 4 | Խոհարար | 0,91 | 1 | 66204 | 66204 |
| 5 | Հավաքարար | 0,46 | 1 | 33466 | 33466 |
| 6 | Դաստիարակ | 0,46 | 1 | 35835 | 35835 |
| 7 | Դայակ | 1,82 | 2 | 66204 | 132408 |
| 8 | Պարետ –հնոցապան-այգեպան | 0,91 | 1 | 70892 | 70892 |
| 9 | Բուժքույր | 0,46 | 1 | 33466 | 33466 |
| 10 | Դաշնակահարուհի | 0,46 | 1 | 35835 | 35835 |
| 11 | Հոգեբան-մեթոդիստ | 0,46 | 1 | 35835 | 35835 |
| 12 | Ռուսաց լեզվի մասնագետ | 0,46 | 1 | 35835 | 35835 |
| 13 | Դաստիարակ | 1,38 | 3 | 33466 | 100398 |
|  | Ընդամենը | 10,6 | 16 | x | 792270 |

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Դիլանյան Հայկ

3.Կարապետյան Արթուր

4.Միքայելյան Ռուստոմ

5.Գրիգորյան Սերյոժա

6.Մկրտչյան Սերգե

7.Գևորգյան Թամարա

8.Սարգսյան Տիգրան

9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին

25 դեկտեմբերի 2015թ.

Հավելված N-5

Թալին համայնքի ավագանու

2015թ. դեկտեմբերի 25-ի թիվ 38-Ա որոշման

ԹԱԼԻՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ.

Աշխատակիցների թվաքանակը 19

| N | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Հաստիքների քանակը | Պաշտոնային դրույքաչափերը /ՀՀ դրամով/ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 75000 | 75000 |
| 2 | Ուսմասվար | 0,91 | 1 | 70892 | 70892 |
| 3 | Հաշվապահ | 0,91 | 1 | 66204 | 66204 |
| 4 | Հավաքարար | 0,91 | 1 | 70892 | 70892 |
| 5 | Ուսուցիչ | 10,01 | 11 | 66204 | 728244 |
| 6 | Պարետ | 0,46 | 1 | 35835 | 35835 |
| 7 | Ուսուցիչ | 2,73 | 3 | 70892 | 212676 |
| | Ընդամենը | 16,93 | 19 | x | 1259743 |

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Դիլանյան Հայկ

3.Կարապետյան Արթուր

4.Միքայելյան Ռուստոմ

5.Գրիգորյան Սերյոժա

6.Մկրտչյան Սերգեյ

7.Գևորգյան Թամարա

8.Սարգսյան Տիգրան

9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին
25 դեկտեմբերի 2015թ.

Հավելված N-6

Թալին համայնքի ավագանու

2015թ. դեկտեմբերի 25-ի թիվ 38-Ա որոշման

Թալինի Գ. Ավդալյանի Անվան Մարզադպրոց ՀՈԱԿ Աշխատակիցների Թվաքանակը , Հաստիքացուցակը ԵՎ Պաշտոնային Դրույքաչափերը .

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ 11

| ՀՀ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՀԱՍՏԻՔ-ՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀ ԴՐԱՄՈՎ/ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 75000 | 75000 |
| 2 | Հաշվապահ | 0,91 | 1 | 66204 | 66204 |
| 3 | Մարզիչ | 0,91 | 1 | 66204 | 66204 |
| 4 | Հրահանգիչ , մեթոդիստ | 0,91 | 1 | 66204 | 66204 |
| 5 | Բուժքույր | 0,46 | 1 | 33466 | 33466 |
| 6 | Պահակ ցերեկային | 0,91 | 1 | 66204 | 66204 |
| 7 | Հնոցապան | 0,46 | 1 | 33466 | 33466 |
| 8 | Հավաքարար | 0,91 | 1 | 66204 | 66204 |
| 9 | Մարզիչ | 2,73 | 3 | 70892 | 212676 |
|  | ԸՆԴԱՄԵՆԸ | 9,2 | 11 | x | 685628 |

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Դիլանյան Հայկ

3.Կարապետյան Արթուր

4.Միքայելյան Ռուստամ

5.Գրիգորյան Սերյոժա

6.Մկրտչյան Սերգե

7.Գևորգյան Թամարա

8.Սարգսյան Տիգրան

9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին

25 դեկտեմբերի 2015թ.

Հավելված N-7

Թալին համայնքի ավագանու

2015թ. դեկտեմբերի 25-ի թիվ 38-Ա որոշման

Թալինի Մանկական Գեղարվեստի դպրոց ՀՈԱԿ Աշխատակիցների Թվաքանակը , Հաստիքացուցակը ԵՎ Պաշտոնային Դրույքաչափերը

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ 11

| ՀՀ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀ ԴՐԱՄՈՎ/ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 75000 | 75000 |
| 2 | Հաշվապահ | 0,91 | 1 | 70892 | 70892 |
| 3 | Ուսուցիչ | 5,46 | 6 | 66204 | 397224 |
| 4 | Գործավար-լաբորանտ | 0,91 | 1 | 66204 | 66204 |
| 5 | Հավաքարար | 0,91 | 1 | 66204 | 66204 |
| 6 | Պարետ | 0,91 | 1 | 70892 | 70892 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 10,1 | 11 | x | 746416 |

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արայան Արամ

2.Դիլանյան Հայկ

3.Կարապետյան Արթուր

4.Միքայելյան Ռուստամ

5.Գրիգորյան Սերյոժա

6.Մկրտչյան Սերգե

7.Գևորգյան Թամարա

8.Սարգսյան Տիգրան

9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին

25 դեկտեմբերի 2015թ.

Հավելված N-8

Թալին համայնքի ավագանու

2015թ. դեկտեմբերի 25-ի թիվ 38-Ա որոշման

ԹԱԼԻՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ ՀՈԱԿ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ.

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ 12

| N | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Հաստիքների քանակը | Պաշտոնային դրույքաչափերը /ՀՀ դրամով/ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 75000 | 75000 |
| 2 | Հաշվապահ | 0,91 | 1 | 66204 | 66204 |
| 3 | Գեղմասվար | 0,91 | 1 | 66204 | 66204 |
| 4 | Մեթոդիստ | 4,55 | 5 | 70892 | 354460 |
| 5 | Ժող. Պարերի գեղ. ղեկավար | 0,91 | 1 | 70892 | 70892 |
| 6 | Ժող. Գործիքների գեղ. ղեկավար | 0,91 | 1 | 66204 | 66204 |
| 7 | Նվագակցող | 0,91 | 1 | 66204 | 66204 |
| 8 | Հավաքարար | 0,91 | 1 | 70892 | 70892 |
| | Ընդամենը | 11,01 | 12 | x | 836060 |

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1. Արամյան Արամ
2. Դիլանյան Հայկ
3. Կարապետյան Արթուր
4. Միքայելյան Ռուստոմ
5. Գրիգորյան Սերյոժա
6. Մկրտչյան Սերգե
7. Գևորգյան Թամարա
8. Սարգսյան Տիգրան
9. Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին
25 դեկտեմբերի 2015թ.

Հավելված N-9

Թալին համայնքի ավագանու

2015թ. դեկտեմբերի 25-ի թիվ 38-Ա որոշման

ԹԱԼԻՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՈԱԿ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ.

Աշխատակիցների թվաքանակը -7

| N | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Հաստիքների քանակը | Պաշտոնային դրույքաչափերը /ՀՀ դրամով/ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 72752 | 72752 |
| 2 | Հաշվապահ | 0,91 | 1 | 66204 | 66204 |
| 3 | Բաժնի վարիչ /սպասարկման , մանկական / | 0,91 | 2 | 33466 | 66932 |
| 4 | Գրադարանավար | 1,38 | 3 | 33466 | 100398 |
| | Ընդամենը | 4,2 | 7 | x | 306286 |

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Դիլանյան Հայկ

3.Կարապետյան Արթուր

4.Միքայելյան Ռուստամ

5.Գրիգորյան Սերյոժա

6.Մկրտչյան Սերգե

7.Գևորգյան Թամարա

8.Սարգսյան Տիգրան

9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին
25 դեկտեմբերի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

**25 դեկտեմբերի 2015 թվական N 39-Ն**

**ԹԱԼԻՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի և 34-րդ հոդվածի 2-րդ կետի , <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին որոշում է՝

1. 2016 թվականի համար Թալին համայնքի վարչական տարածքում սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ,

բբ) 501-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ,

բգ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100 000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

**3)** Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

**4)** Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 6000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 6000 դրամ:

**5)** Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000դրամ.

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 32 000 դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 6000 դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ.

**6)** Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50.000դրամ:

7)Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 30 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

8)Համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 0 դրամ:
9)Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.
բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ.
գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.
.դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:
10) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:
11)Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ:
12) Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 6000 դրամ
13)Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի ծիսակատարության ծառայություններ իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել տարեկան 60000 դրամ
14)Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանվում է 10 000 դրամ:
15)Տեղական ինքակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանվում է 1000դրամ:
16)Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցների վճարը սահմանվում է 3000դրամ:
2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2016թ .հունվարի 1-ից:

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Դիլանյան Հայկ

3.Կարապետյան Արթուր

4.Միքայելյան Ռոստոմ

5.Գրիգորյան Սերյոժա

6.Մկրտչյան Սերգե

7.Գևորգյան Թամարա

8.Սարգսյան Տիգրան

9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին
25 դեկտեմբերի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

**25** դեկտեմբերի **2015** թվական **N 40-Ն**

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով , **համայնքի ավագանին որոշում է՝**

1.2016թվականի համար համայնքի սեփականություն հանդիսացող շինությունների վարձակալության վճար սահմանել 1 քմ –ի հաշվով ոչ պակաս 500 դրամից ։

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից ։

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Դիլանյան Հայկ

3.Կարապետյան Արթուր

4.Միքայելյան Ռուստամ

5.Գրիգորյան Սերյոժա

6.Մկրտչյան Սերգե

7.Գևորգյան Թամարա

8.Սարգսյան Տիգրան

9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին
25 դեկտեմբերի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

**25 դեկտեմբերի 2015** թվական **N 41-Ն**

# ԹԱԼԻՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՀՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի , 34-րդ հոդվածի 2-րդ կետի , 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներով և << Տեղական տուրքերի մասին >> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի <<դ>> կետի դրույթներով , **համայնքի ավագանին որոշում է `**

1.2016թվականին Թալինի կոմունալ ծառայություն ՀՈԱԿ –ի կողմից քաղաքի աղբահանությունը կազմակերպելու համար , աղբահանության ամսական վճար սահմանել մեկ անձի համար 100 դրամ , իսկ տնտեսվարող սուբյեկտների համար աղբահանության ամսական վճար սահմանել հաշվի առնելով տնտեսվարող սուբյեկտների մոտ ամսվա կտրվածքով աղբի հնարավոր ծավալները , բայց ոչ պակաս ամսական 500դրամից :

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2016թվականի հունվարի 1-ից :

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Դիլանյան Հայկ

3.Կարապետյան Արթուր

4.Միքայելյան Ռուստամ

5.Գրիգորյան Սերյոժա

6.Մկրտչյան Սերգե

7.Գևորգյան Թամարա

8.Սարգսյան Տիգրան

9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ` Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին

25 դեկտեմբերի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N 42-Ն**

## 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԹԱԼԻՆԻ ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի , 34-րդ հոդվածի 3-րդ կետի և 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներով , **համայնքի ավագանին որոշում է `**

1.Թալինի Գ. Ավդալյանի անվան մարզադպրոցում գործող խմբերում մարզվող երեխաների մարզումները անցկացնել անվճար :

-Մարզաարքերով անհատական մարզվող քաղաքացիների համար ` մարզաարքերից օգտվելու մեկ ժամվա համար վարձավճար սահմանել 300 դրամ :

-Մարզադպրոցի մարզասրահը խաղերի կամ մարզումների համար տրամադրելու դեպքում , մեկ ժամվա համար վարձավճար սահմանել 2000 դրամ :

2.Թալինի մշակույթի կենտրոն ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների համար սահմանել վարձավճար `

-մշակութային միջոցառումների անցկացման նպատակով դահլիճ տրամադրելու համար մեկ ժամը 5000 դրամ :

-ժողովների կամ հավաքների անցկացման նպատակով դահլիճ տրամադրելու համար , մեկ ժամը 20000 դրամ :

-պետական , բարեգործական և դրանց համարժեք միջոցառումների համար դահլիճ տրամադրել անվճար :

3.Թալինի թիվ -2 և թիվ-3 մանկապարտեզների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարը սահմանել ամսական 5000 դրամ :

4.Թալինի երաժշտական դպրոցում սովորելու համար ուսման վարձը սահմանել 2500 դրամ :

5.Թալինի գեղարվեստի դպրոցում սովորելու համար ուսման վարձը սահմանել ամսական 2500դրամ :

6.Տալ համաձայնություն համայնքի ղեկավար Ս. Արամյանին , ըստ անհրաժեշտության

սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար , վերոհիշյալ ծառայություններից օգտվելու դեպքում , համայնքի ղեկավարի որոշմամբ սահմանելու զեղչեր :

7.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2016թվականի հունվարի 1-ից :

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Դիլանյան Հայկ

3.Կարապետյան Արթուր

4.Միքայելյան Ռուստամ

5.Գրիգորյան Սերյոժա

6.Մկրտչյան Սերգե

7.Գևորգյան Թամարա

8.Սարգսյան Տիգրան

9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին

25 դեկտեմբերի 2015թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**25 դեկտեմբերի 2015 թվական N 43-Ա**

## ԹԱԼԻՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀՈԱԿ-ՆԵՐԻ ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով , հիմք ընդունելով Թալինի քաղաքապետի 25.11.2015թվականի թիվ 51 կարգադրությունը և գույքագրման հանձնաժողովի արձանագրությունը , **համայնքի ավագանին որոշում է `**

1.Հաստատել Թալինի քաղաքապետարանի և ՀՈԱԿ-ների 2015թվականի տարեվերջյան գույքագրման փաստաթղթերը , համաձայն 1 -10 հավելվածների :

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Դիլանյան Հայկ

3.Կարապետյան Արթուր

4.Միքայելյան Ռոստոմ

5.Գրիգորյան Սերյոժա

6.Մկրտչյան Սերգե

7.Գևորգյան Թամարա

8.Սարգսյան Տիգրան

9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին
25 դեկտեմբերի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

**25 դեկտեմբերի 2015 թվական N 44-Ն**

ԹԱԼԻՆ ՔԱՂԱՔԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և << Իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 70-րդ և 72-րդ հոդվածների դրույթներով , **համայնքի ավագանին որոշում է `**

1.Հավանություն տալ Թալին քաղաքի բյուջեի փոփոխության առաջարկությանը , համաձայն հավելվածի ։

2.Հաստատել Թալին քաղաքի 2015թվականի տարեկան բյուջեն կատարված փոփոխություններով , համաձայն 1-6 հատվածների

3.Ուժը կորցրած ճանաչել Թալին համայնքի ավագանու 06.11.2015թ. <<Թալին քաղաքի 2015 թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին >> թիվ 33-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերը ։

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից ։

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Դիլանյան Հայկ

3.Կարապետյան Արթուր

4.Միքայելյան Ռուստոմ

5.Գրիգորյան Սերյոժա

6.Մկրտչյան Սերգե

7.Գևորգյան Թամարա

8.Սարգսյան Տիգրան

9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին

25 դեկտեմբերի 2015թ.

Հավելված

Թալինի քաղաքային համայնքի ավագանու

2015 թ. դեկտեմբերի 25 -ի թիվ 44 - Ն որոշման

ա)2015թ. տարեկան ճշտված բյուջեի եկամտային մասում կատարել հետևյալ փոփոխությունները

| Անվանումը | Տարեկան հաստատված բյուջեով | Կատարված փոփոխություն | | Տարեկան ճշտված բյուջե |
|---|---|---|---|---|
| | | ավելացում | պակասեցում | |
| Գույքահարկ | 16000.0 | 2710.0 | 0.0 | 18710.0 |
| Գույքի վարձակալություն | 4600.0 | | 600.0 | 4000.0 |
| Վարչական գանձումներ | 150.0 | | 110.0 | 40.0 |
| ՎԲ պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացումներ | 8000.0 | | 5000.0 | 3000.0 |
| ՎԲ պահուստային ֆոնդ | 0.0 | 5000.0 | | 5000.0 |

բ)2015թ. տարեկան ճշտված բյուջեի ծախսային մասում ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման

| Անվանումը | Տարեկան հաստատված բյուջեով | Կատարված փոփոխություն | | Տարեկան ճշտված բյուջե |
|---|---|---|---|---|
| | | ավելացում | պակասեցում | |
| Կառավարման ապարատ 01.1.1 | | | | |
| 4111 | 24555.5 | | 1300.0 | 23255.5 |
| 4214 | 1160.0 | | 200.0 | 960.0 |
| 4264 | 1195.0 | 90.0 | | 1285.0 |
| Նախադպրոց. կրթություն 09.1.1 | | | | |
| Թիվ 2 մ/ մանկապարտեզ 4511 | 16500.0 | 210.0 | | 16710.0 |
| Նախադպրոց. կրթություն 09.1.1 | | | | |
| Թիվ 3 մ/ մանկապարտեզ 4511 | 11500.0 | 1100.0 | | 12600.0 |
| Սպորտային ծառայություն 08.1.1 | | | | |
| 4511 | 8600.0 | 250.0 | | 8850.0 |
| Կրթություն /երաժշտակ.դպ./ 09.8.1 | | | | |
| 4511 | 17300.0 | 750.0 | | 18050.0 |
| Կրթություն /գեղարվեստի դպ./ 09.8.1 | | | | |
| 4511 | 8600.0 | 250.0 | | 8850.0 |
| Ընդհանուր բնույթի հանր. ծառայութ. | | | | |
| 01.6.1 4237 | 480.0 | 400.0 | | 880.0 |
| Սոցիալական պաշտպանութ.10.7.1 | | | | |
| 4729 | 1900.0 | 450.0 | | 2350.0 |
| Ճանապարհային տրանսպորտ | | | | |
| 04.5.1 5113 | 2000.0 | | 2000.0 | 0.0 |
| Փողոցների լուսավորում | | | | 0.0 |
| 06.4.1 5113 | 5027.3 | | 3000.0 | 2027.3 |
| Պահուստային ֆոնդ 11.1.2 | | | | 0.0 |
| 4891 | 0.0 | 5000.0 | | 5000.0 |

Կողմ -9 դեմ -0 Ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Դիլանյան Հայկ

3.Կարապետյան Արթուր

4.Միքայելյան Ռուստոմ

5.Գրիգորյան Սերյոժա

6.Մկրտչյան Սերգե

7.Գևորգյան Թամարա

8.Սարգսյան Տիգրան

9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին

25 դեկտեմբերի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**25 դեկտեմբերի 2015 թվական N 45-Ն**

## ԹԱԼԻՆ ՔԱՂԱՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի , 34-րդ հոդվածի 1-ին կետի և <<Բյուջետային համակարգի մասին >> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով , **համայնքի ավագանին որոշում է `**

1.Հաստատել Թալին քաղաքի 2016թ. տարեկան բյուջեն

ա) եկամուտների մասով 136967,3 հազ. դրամ

բ) ծախսերի մասով 136967,3 հազ. դրամ

գ ) հավելուրդի մասով 6200,0 հազ. դրամ

2.Հաստատել համայնքի բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների , համաձայն հատված 1-ի :

3.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման , համաձայն հատված 2-ի :

4.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման , համաձայն հատված 3-ի :

5.Հաստատել բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդ )համաձայն հատված 4-ի :

6.Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի )ֆինանսավորման աղբյուրները , համաձայն հատված 5-ի :

7.Հաստատել բյուջեի ծախսերը , ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման , համաձայն հատված 6-ի :

8.Ծախսերի ֆինանսավորումը կատարել ստացված փաստացի մուտքերի սահմաններում , պահպանելով ծախսերի համամասնությունները :

9.<<Բյուջետային համակարգի մասին >> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն , թույլատրել համայնքի ղեկավարին կատարել ծախսային հոդվածների հաստատված ծավալների 15 % -ը չգերազանցող վերաբաշխումներ :

10.Սոցիալական պաշտպանության բնագավառի ծախսերը կատարել համայնքի ղեկավարի կարգադրությունների համաձայն և կանխիկ դրամի վճարումը կատարել քաղաքապետարանի դրամարկղի միջոցով :

11.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2016թ. հունվարի 1-ից :

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Դիլանյան Հայկ

3.Կարապետյան Արթուր

4.Միքայելյան Ռուստամ

5.Գրիգորյան Մերյոժա

6.Մկրտչյան Սերգե

7.Գևորգյան Թամարա

8.Սարգսյան Տիգրան

9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին

25 դեկտեմբերի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

**25 դեկտեմբերի 2015 թվական N 46-Ա**

# ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին >> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի, <<Հողի հարկի մասին >> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 22.06.2012թ. թիվ 822-Ն որոշման պահանջներով , հիմք ընդունելով Թալին համայնքի ներքոհիշյալ բնակիչների դիմումները , **համայնքի ավագանին որոշում է `**

1.Թալին համայնքի ներքոհիշյալ բնակիչներին տալ գույքահարկի ու հողի հարկի գումարի և տույժի չափով արտոնություն `

-Թորոսյան Գագիկ Ալբերտի –հողի հարկի տույժ -63109 դրամ<br>
գույքահարկի տույժ -4250դրամ

-Տերտերյան Մովսես վարդանի - գույքահարկի տույժ -14496 դրամ

-Թորոսյան Ամրամ Խորենի - հողի հարկի տույժ -79562 դրամ

-Մարտիրոսյան Տիրուհի Արայիկի - հողի հարկ -846 դրամ<br>
գույքահարկ -48787 դրամ

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Դիլանյան Հայկ

3.Կարապետյան Արթուր

4.Միքայելյան Ռուստոմ

5.Գրիգորյան Սերյոժա

6.Մկրտչյան Սերգե

7.Գևորգյան Թամարա

8.Սարգսյան Տիգրան

9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ` Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին<br>
25 դեկտեմբերի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**25 դեկտեմբերի 2015 թվական N 47-Ա**

## ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, ՀՀ Հողային օրենսգրքի 64 –րդ հոդվածի 3-րդ կետի, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ՀՀ Կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված <<Պետական և համայքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման>> կարգի 20-րդ կետի <<գ>> ենթակետի դրույթներով Թալին համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և Կարեն Գրիգորյանի դիմումը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1.Թալին համայնքի սեփականություն համարվող ՝ 02-003-059-307 ծածկագրով , Խանջյան 15/7 հասցեում գտնվող 23 քմ բնակավայրի նշանակության , խառը կառուցապատման հողատարածքը ուղղակի վաճառքով՝

հողի արժեքը 528 դրամ x 23 քմ =12144 դրամ

գույքի գրանցման ծախսեր 56000 դրամ

Ընդամենը 68144 դրամ արժեքով օտարել Կարեն Գրիգորյանին:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Դիլանյան Հայկ

3.Կարապետյան Արթուր

4.Միքայելյան Ռոստոմ

5.Գրիգորյան Սերյոժա

6.Մկրտչյան Սերգե

7.Գևորգյան Թամարա

8.Սարգսյան Տիգրան

9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին

25 դեկտեմբերի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

**25 դեկտեմբերի 2015թ. N 48-Ն**

## ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մաս >>ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և ՀՀ Հողային օրենսգրքի 67-րդ ,68-րդ հոդվածի պահանջներով , ՀՀ Կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված <<պետական և համայքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման>> կարգի 5-րդ գլխի պահանջներով, Թալին համայնքի գլխավոր հատակագծին համպատասխան , հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը , **համայնքի ավագանին որոշում է՝**

1.Տալ համաձայնություն Թալինի համայնքային սեփականություն համարվող բնակավայրի նշանակության հողատարածքները աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու և հաստատել մեկնարկային գին համաձայն հավելվածի :

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող տասներորդ օրվանից :

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ
2.Դիլանյան Հայկ
3.Կարապետյան Արթուր
4.Միքայելյան Ռուստոմ
5.Գրիգորյան Սերյոժա
6.Մկրտչյան Սերգե
7.Գևորգյան Թամարա
8.Սարգսյան Տիգրան
9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին
25 դեկտեմբերի 2015թ.

Հավելված

Թալին քաղաքային համայնքի ավագանու

2015թ. դեկտեմբերի 25-ի թիվ 48-Ն որոշման

| լուտ | Հողամասի անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /հա/ | Նպատակային նշանակությունը | Օժանդակ շինություն | Մեկնար կային գինը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Խառը կառուցապատում | Քոթանյան 11/7 | 02-003-0040-0323 | 0,089 | Բնակավայրի | չկա | 1000 |
| 2 | Արդյունաբերական օբյեկտների | Պարույր Սևակ 1/1 | 02-003-041-031 | 0,012 | Արդյունաբերական, ընդերք. և այլ ատադր. նշանակության | չկա | 1000 |

Կողմ -9 դեմ -0 Ձեռնպահ -0

1.Արամյան Արամ
2.Դիլանյան Հայկ
3.Կարապետյան Արթուր
4.Միքայելյան Ռուստամ
5.Գրիգորյան Սերյոժա
6.Մկրտչյան Սերգե
7.Գևորգյան Թամարա
8.Սարգսյան Տիգրան
9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին
25 դեկտեմբերի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

**25 դեկտեմբերի 2015 թվական N 49-Ա**

# ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԽԱՆՁՅԱՆ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի , 32-րդ հոդվածի 12-րդ կետի դրույթներով , հիմք ընդունելով <<Մխիթարյան >> ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Մխիթարյանի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը , **համայնքի ավագանին որոշում է `**

1.Թալինի համայնքային սեփականություն հանդիսացող , Խանջյան 9 հասցեում գտնվող վարչական շենքից 14,4 քմ տարածք , ամսեկան 15000 դրամ վարձավճարով տրամադրել <<Մխիթարյան >> ՍՊԸ-ին :

2.Գույքի վարձակալության ժամկետ սահմանել 2016թ. հունվարի 1-ից մինչև 2021 թ. հունվարի 1-ը :

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2016թ.հունվարի 1-ից մինչև 2021թ. հունվարի 1-ից :

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Դիլանյան Հայկ

3.Կարապետյան Արթուր

4.Միքայելյան Ռուստամ

5.Գրիգորյան Սերյոժա

6.Մկրտչյան Սերգե

7.Գևորգյան Թամարա

8.Սարգսյան Տիգրան

9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին
25 դեկտեմբերի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

**25 դեկտեմբերի 2015 թվական N 50-Ա**

<<ԹԱԼԻՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> 22.04.2014Թ. ԹԻՎ 15-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի և <<Իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով , **համայնքի ավագանին որոշում է՝**

1.Թալինի քաղաքապետարանի աճուրդային և մրցույթային հանձնաժողովի կազմը հաստատելու մասին >> 22.04.2014թ. թիվ 15-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն ՝ հանձնաժողովի կազմից հանել Ռազմիկ Մարգարյանին և նրա փոխարեն հանձնաժողովի կազմում ընդգրկել Անդրանիկ Միքայելյանին ։

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից ։

Կողմ -9 դեմ -0 ձեռնպահ -0

1.Արամյան Արամ

2.Դիլանյան Հայկ

3.Կարապետյան Արթուր

4.Միքայելյան Ռուստամ

5.Գրիգորյան Սերյոժա

6.Մկրտչյան Սերգե

7.Գևորգյան Թամարա

8.Սարգսյան Տիգրան

9.Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ք. Թալին
25 դեկտեմբերի 2015թ.